# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**23 փետրվարի 2021 թվականի N** 75

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի N 190-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 12-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի դրույթներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման կարգը հաստատելու մասին» N 1066 որոշման 2-րդ կետով՝

***որոշում եմ.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման մարզային հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2009 թվականի նոյեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման մարզային հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» N 190-Ա որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

24.02.2021

X [signature]

ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN MELIKSET 4108600096

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ** **Մ. Պողոսյան**

2021թ. փետրվարի 23
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի 2021թ.
փետրվարի 23-ի N 75 որոշման

## ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

| | |
|---|---|
| Մելիքսեթ Պողոսյան | Սյունիքի մարզպետ /հանձնաժողովի նախագահ/ |
| Կարո Ավանեսյան | Սյունիքի մարզպետի տեղակալ |
| Գագիկ Խաչատրյան | Սյունիքի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար |
| Մուշեղ Կոստանդյան | Սյունիքի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին մարզային հողային պետական տեսչության պետ /հանձնաժողովի քարտուղար/ |
| Նաիրի Հովհաննիսյան | «Սյունիք» ջրօգտագործողների ընկերության գործադիր տնօրեն /համաձայնությամբ/ |
| ------------------------- | համապատասխան համայնքի ղեկավարը /համաձայնությամբ/: |

2/23/2021

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано: MARTIROSYAN EDGAR 4003840615

**ՀՀ Սյունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղար** **Է. Մարտիրոսյան**